

ԼԵԶՎԱԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԶԳՏՈՒՄՆ ԻԲԻԵՎ ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Բ. Գ. Թ. Նաիրա Գասպարյան,
Երևանի պետական համալսարան

Corresponding author. E-mail: gasparyannaira59@gmail.com

Paper received 17.01.20; Revised 28.01.20; Accepted for publication 03.02.20.

<https://doi.org/10.31174/SEND-Ph2020-216VIII64-05>

Հոդվածում փորձ է արվում ճանաչողական միավորների առանձնացման մեթոդի կիրառմամբ ազգային իմաստությունն ու արժեքները ներկայացնել մտքի բովանդակային ամբողջականության մեջ: Քննության են առնվում տարբեր դարաշրջանների պաշտոնական խոսք ներկայացնող տեքստահատվածներից առանձնացված լեզվական միավորներ, ճանաչողական հասկացություններ, որոնք բնութագրում են շոտլանդացու ինքնությունն ու հոգեկերտվածքը՝ բացահայտելով շոտլանդացու ազատասեր ու չընկճվող ոգին: Հոդվածի նպատակն է լեզու-ճանաչողություն աղբյուրների շրջանակում ներկայացնել մայրենի կարևորության, ազատության, անկախության գաղափարների լեզվական պատկերի կադապարումը շոտլանդացի լեզվակրի գիտակցության մեջ:

Բանալի բառեր՝ լեզվամշակույթ, շոտլանդացի, ինքնություն, անկախություն, հռչակագիր:

Ներածություն. Համահարթեցման աննախադեպ տարածման պայմաններում օրվա հրամայական է դարձել ազգային ինքնությանն ու գաղափարախոսություններին առնչվող հարցերի քննությունը: Գաղտնիք չէ, որ եվրոպական իրականության մեջ, հաճախակի է քննարկվում այն հարցը, որ համահարթեցումը առաջին հերթին վերաբերում է ազգային տարրալուծմանը համաշխարհային մեջ: Ասիական և աֆրիկյան ազգերը համահարթեցումն ընկալում են իբրև անմիջական վտանգ ազգային անկախությանն ու արժեհամակարգին և ջանում են խուսափել գորթալ համայնքին ներառվելուց, իսկ շոտլանդացին, ձգտելով ազգապահպանության, չի ցանկանում հրաժարվել իր եվրոպական ինքնությունից, որն անխուսափելիորեն տեղի կունենա սահմանադրական և տարածական փոփոխությունների արդյունքում: Ըստ շոտլանդական աղբյուրների Բրեքսիթը (Brexit)՝ Բրիտանիայի հրաժարումը Եվրամիությունից, ամենաքիչ ցանկալին է [1, էջ 512-526]:

Հոդվածի նպատակը և մեթոդները. Հասկացության վերլուծության միջոցով, ճանաչողական միավորների առանձնացման մեթոդի կիրառմամբ, փորձ է արվում ազգային իմաստությունն ու արժեքները ներկայացնել մտքի բովանդակային ամբողջականության մեջ: Քննության նպատակն է պարզել, թե արդյոք համամարդկային արժեքների ջատագով շոտլանդացուն հաջողվել է պահպանել իր ազգային ինքնությունը համահարթեցման համատեքստում: Հետազոտությունը կատարված է արտալեզվական հենքի յուրահատկությունների հաշվառմամբ: Օրինակների ընտրողաբար առանձնացման մեթոդի կիրառությամբ կփորձենք վեր հանել գորթալ զարգացումների ազդեցությունները ժամանակակից շոտլանդացու հոգեկերտվածքի, ազգային ինքնության, արժեհամակարգի, ձգտումների վրա:

Ուսումնասիրված նյութերի և հետազոտության արդյունքների քննություն. Կա այն տեսակետը, որ օտարները տեղեկատվության պակասի պատճառով թուր կարծիք ունեն Շոտլանդիայում շոտլանդերենի կարգավիճակի առնչությամբ: Հաճախ ընկալվելով իբրև ինքնուրույն կարգավիճակ չունեցող լեզվական տարատեսակ՝ խնդիր է առաջացել քաղաքական միջոցառումների օգնությամբ նոր կյանք հաղորդել շոտլանդերենին (the Scots) ու փրկել այն: Նույնիսկ

շոտլանդերենի իրավիճակը համեմատվել է ուսանողական սենյակի խորդենու հետ՝ ոչ ոք չի ցանկանում որ այն չորանա, բայց ուսանողներից յուրաքանչյուրը մտածում է, որ ընկերը ջրում է այն . «Scots is like a geranium in a student flat: nobody means to kill it but everybody else thinks somebody else is watering it.» [2, էջ 134]: Մասնավորապես, Նիհթընընի մեկնաբանմամբ, անգամ Շոտլանդիայում կա որոշակի ոչ հստակ պատկերացում խնդրի կապակցությամբ, չնայած շոտլանդական, բրիտանական և եվրոպական օրենսդիր, գիտա-ուսումնական, և մշակույթային մարմինները գիտակցում են լեզվի դերը շոտլանդական մշակույթի կարևորության հարցում [2, էջ 118]: Նիհթընընը իր հոդվածի եզրահանգումների մեջ անդրադարձ է կատարում առկա արտալեզվական իրողությանը. այսօր շոտլանդացու մայրենին իր երկու դրսևորումներով (Scots, Scottish Gaelic) ճանաչված է որպես անգլերենից տարբեր լեզու ոչ միայն շոտլանդական գործադիր իշխանությունների և պառլամենտի կողմից, այլև Մեծ Բրիտանիայի պառլամենտի կողմից, որի համար հիմք է հանդիսացել Տարածքային և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի վավերացումը [2, էջ 134]: Ի դեպ մի շարք հեղինակներ (Շյոբրումը, Քանլիֆը), այդ թվում նաև Նիհթընընը, կարծես կասկածանքով են մոտենում կելտականի առկայությանը շոտլանդականում, (երևույթին կարելի է հանդիպել գիտական գրականության մեջ, գիտական քննարկումներում): Շյոբրումը կելտական լեզուների և մշակույթի՝ շոտլանդականին առնչվելը դիտում է, որպես ժամանակակից հնարանք [3, էջ 7], իսկ Քանլիֆը նշում է, որ կելտական ժողովուրդները ունեցել են ընդհանուր լեզու և մշակույթ՝ այդպիսով հեռացնելով նրանց շոտլանդական մշակույթից ու լեզվից [4, էջ 111]: Ոմանք խոսում են այն մասին, որ կելտական սովորույթների ու ինքնության որոշ դրսևորումներ Շոտլանդիայում ունեն ոչ շատ ցանկալի հետևանքներ «‘Celticness’ has had also several, less desirable, consequences in Scotland itself.» [2, էջ 121]: Հարկ ենք համարում նշել, որ տարբեր գիտական մոտեցումներին զուգընթաց, Ֆլեյբուքսյան շոտլանդերեն խոսողների խմբում շոտլանդերենի կարգավիճակի մասին հանդիպել ենք նաև ոչ պաշտոնական մեկնաբանման: Շոտլանդիայում այսօր այս երկու լեզուները՝ անգլերենը և շոտլանդերենը այնպես են միաձուլվել, որ անհնարին է նրանց

առանձնացնել: Ուսանողներին բացատրվում են երկու լեզուների լեզվական առանձնահատկությունները իրենց բոլոր բարդություններով և մանրամասներով հանդերձ, սպա դասավանդողն առաջարկում է ուսանողին ստացած գիտելիքի կիրառմամբ ինքնուրույնաբար որոշել շոտլանդերենը առանձին և անկախ լեզու է, թե անգլերենի տարատեսակ: Այսինք, համադրելով պաշտոնական և ոչ պաշտոնական մոտեցումները, հասկանալի է դառնում, որ կարգավիճակի հարցը, այնուամենայնիվ, պարունակում է որոշակի անհատակություն, չնայած, որ, ըստ Նիիթլերի, շոտլանդացու համար Շոտլանդիայի հին լեզուները կարևոր են ոչ միայն քաղաքական, պատմական և լեզվաբանական առումներով. ամենակարևորը խնդրի հուզական-զգացմունքային կողմն է: Նշվածից կարելի է եզրահանգել. շոտլանդացու համար, համահարթեցման համատեքստում, էական է շոտլանդերենով հաղորդակցումը տարբեր մակարդակներում, որը վկայում է մայրենի լեզվի իրական արժեքի, ազգային նկատմամբ սիրո և պահպանելու միտումների, ազգային-հայրենասիրական մղումների և անցյալը ներկայից ու ապագայից չանջատելու մասին: Միևնույն ժամանակ, առաջացած իրավիճակը հաստատում է շոտլանդացու՝ եվրոպական ընտանիքում ներառված լինելու և այդ փորձը դրական ընկալելու մասին:

Նախքան իրավական արժեք ունեցող փաստաթղթերի (5) և (6) քննարկմանն անցնելը ներկայացնենք զարգացումների որոշ միտումներ, պարզաբանենք, թե ինչպես են ներկայիս արտալեզվական իրողություններն անդրադառնում շոտլանդական ինքնության վրա:

Շոտլանդիայում անգլերենն ու շոտլանդերենն այսօր այնպես են միաձուլվել, որ անհնարին է նրանց առանձնացնել: Անդրադառնալով շոտլանդերենի (Scots կամ Scottish Gaelic) վրա քաղաքական իրավիճակի փոփոխության ուղղակի ազդեցության առումով ՄըքԱրթորի թերահավատությանը [7], ում կարծիքով Եվրամիության սահմաններում Շոտլանդիայի ինքնավարությանն ուղղված շարժումը աղերսներ չունի լեզվի հետ, Դեյվիդ Քրիսթլը գրում է, որ, եթե դա է իրականությունը, սպա ակնհայտորեն անգլիական լեզուների ընտանիքում կվերանա հզոր ավանդական մրցակիցը, ով պայքարում է ինքնության համար [8, էջ 181]: Գրականության մեջ լեզու-ինքնություն առնչությունների առումով արժանի է հիշատակման Ուլիլիամ Ռասլը Այտքընի [9], դիտարկումն այն մասին, որ անգամ անգլերենով ստեղծագործելիս անհնարին է չզգալ, որ հեղինակը շոտլանդացի է. «*There is a tendency for the Scots writer's nationality to make itself felt, even when writing in English*»: Ըստ էության, կարևորն ազգային ոգին է, որ ստիպում է գրել: Հարվի Վուդը չի կարևորում ստեղծագործության լեզուն: Ըստ նրա էականն այն է, որ գրողն առաջնորդվում է շոտլանդական լեզվամտածողությամբ և շոտլանդական գրական ավանդույթներով, երբ գրողին ուղղորդում է ազգային ոգին, իսկ օբյեկտիվ պայմանները ստիպում են ստեղծագործել օտարի լեզվով [10]: Շոտլանդական իրականության հզոր բնութագրիչներից է քաղաքական պոեզիան [11, էջ 113-129]:

Փաստն այն է, որ համահարթեցման պայմաններում Շոտլանդիայում հիմնական բնակչության մայրենին գորթալ անգլերենն է և բնակչության ընդամենը փոքրաթիվ մասն է շոտլանդերենը համարում իր մայրենի լեզուն՝ չնայած որ ինքնության վերաբերյալ

հարցման մասնակիցների մասին տվյալները բոլորովին այլ պատկեր են արձանագրում: Այսպես, բնակչության 62% որպես ազգային ինքնություն նշում է՝ «միայն շոտլանդական», որում ներառված են 10-14 տարեկանների 71%-ը, մինչդեռ 30-34 տարիքային խմբի 57%-ն է իրեն համարում «միայն շոտլանդական» ինքնության կրող: Իբրև «միայն շոտլանդական և բրիտանական ինքնության կրողներ» նշում են բնակչության 18%-ը, ընդ որում, դրա 25%-ը կազմում են 65-74 տարեկանները: Հետաքրքրական է, որ «միայն բրիտանական ինքնություն» կրողները բնակչության 8% են, որտեղ մեծամասնություն են 50-64 տարեկանները [12]:

Համահարթեցման համատեքստում համացանցային ուսումնասիրությունները, ցավոք, փաստում են, որ զարգացումների արդյունքում, երբ երիտասարդությունը վատ է տիրապետում կամ բոլորովին չի տիրապետում մայրենիին, ստեղծվում է իրավիճակ, երբ անհնար է դառնում կարդալ ու մեկնաբանել ահռելի քանակով մշակութային հուշարձաններին կատարված գրառումները: Սկսում է թուլանալ պատմական և կոլեկտիվ հիշողությունը, որն ուղղակիորեն անդրադառնում է ինքնության վառ դրսևորումների վրա՝ աստիճանաբար խամրում է ինքնությունը: Համահարթեցման համատեքստում այդպիսի փոփոխություններն ունեն բացատրություն [3, էջ 12-13]: Համացանցային ոչ պաշտոնական քննարկումներից տեղեկանում ենք նաև, որ Scots տարբերակը Էդինբուրգում դասավանդում են «Լեզվաբանություն և անգլերեն» բաժնում, իբրև Հին անգլերենի՝ (Old English) հիմքի վրա զարգացած տարբերակ: Անգամ համալսարանական համատեքստում, նշված լեզուների առանձնահատկություններն ու բարդությունները ուսանողներին մանրամասնորեն բացատրվելուց հետո, նրանց առաջարկվում է ինքնուրույնաբար որոշել շոտլանդերենը անգլերենից անկախ գոյություն ունեցող ինքնուրույն լեզու է, թե անգլերենի տարատեսակ: Առավել ևս, Շոտլանդիայի սահմաններից դուրս օտարազգի հանրության համար շոտլանդերենի կարգավիճակը մնում է հակասական՝ լիարժեք տեղեկատվության բացակայության պատճառով, ինչպես նշում է Ա. Նիիթլերը [4, էջ 118]:

In a non-Scottish context there is a general lack of information and understanding of the Scots language and its status within Scotland. Even within Scotland itself there is a degree of confusion, albeit Scottish, British and European legislative, academic and cultural bodies all recognise the importance of the language to Scottish culture .

Չնայած վերը նշված հանգամանքներին՝ շոտլանդացին պարբերաբար փորձել է իր հայրենի Շոտլանդիան հանրաքվեի միջոցով (վերջինը 2014թ. սեպտեմբերի 18-ին) հռչակել անկախ, որը սակայն միշտ ձախողվել է: Համահարթեցման պայմաններում անգամ, երբ անկախ պետություններն են ինտեգրվում եվրոպական համայնքին, ազատության ու անկախության ձգտումը շոտլանդացու համար շարունակում է մնալ առաջնային: Վիկտորիա Վերերը գրում է, որ պաշտամենտական փոփոխություններից հետո սահմանադրական փոփոխությունները Շոտլանդիայում 1999թ. ուղեկցվել են ինքնության վերաբերյալ ակադեմիական ուսումնասիրություններով վերլուծության են ենթարկվել այդ փոփոխությունների և ինքնության հարաբերակցությունն ու

փոխկապակցվածությունը [13]: Քննությունը բացահայտում է, որ միշտ չէ, որ շոտլանդացիները սերտ կապ են փնտրում պետական և ազգային ինքնությունների միջև, սակայն հաճախ դժվարանում են անջատել իրենց շոտլանդական ինքնությունը բրիտանականից: Հարց է առաջանում՝ այդ երկու ինքնություններից ո՞րն է շոտլանդացու համար առաջնային և, բնականաբար, բրիտանական ինքնությունն ընկալվում է իբրև լրացուցիչ արժեք ոչ միայն շոտլանդացու համար, այլև այն բոլոր ազգերի համար, որոնք ապրում են Մեծ Բրիտանիայի տարածքում: Հին շոտլանդացու ազատասիրությունն իբրև հոգեկերտվածքի բնութագրիչ գիծ երևան է գալիս, երբ դիտարկում ենք հատվածներ Արբրոութի (Arbroath) անկախության հայտարարագրից: Ըստ գրավոր աղբյուրների 1320 թ. ապրիլի 6-ին շոտլանդական թագավորանիստ Արբրոութ քաղաքի 40 խոշոր կալվածատերեր և 8 կոմս կազմում են անկախության հայտարարագիր և դիմում են երկրի հոգևոր առաջնորդին (6-րդ դարից նրանք արդեն բրիտանոնյա էին) խնդրանքով, որ նա ճանաչի երկրի անկախությունը և 1306 թ-ից թագավորող Ռոբերտ Բրուսին (1274-1329)՝ որպես անկախ երկրի օրինական թագավոր: Հռչակագրում հստակ ասվում է, որ շոտլանդացին պայքարում է միայն անկախության համար, նրան չեն հետաքրքրում փառք ու հարստություններ, այլ ցանկանում է միայն թոթափել անգլիական լուծը, որովհետև շոտլանդացին պատվի մարդ է. «A man will die to save his honour.»: Լատիներենով կազմված փաստաթղթում ժխտական կառույցներն արտահայտում են շոտլանդացու ընդգումն ու հույզերը: 1296 թվից Անգլիայի և Շոտլանդիայի միջև տեղի էր ունենում պատերազմ անկախության համար՝ Էդուարդ 1-ինը փորձում էր նվաճել Շոտլանդիան: Այն բանից հետո, երբ մահացել էր Ալեքսանդր երրորդը և նրա թոռնուհին, Էդուարդ 1-ը փորձել էր միջամտել միապետի ընտրության հարցում, իսկ Շոտլանդիան ոտքի էր կանգնել՝ պաշտպանելու հայրենիքը Էդուարդ 1-ի ներխուժումից: «Scotland Forever» կապակցությունը ազգային խորհրդանիշի վրա այսօր էլ փաստում է, առաջին հռչակագրի տրամադրությունը՝ նույնիսկ էթե հարյուր շոտլանդացի մնա կենդանի նրանք պայքարելու են երկիրը ազատագրելու համար՝ վկայում է հայտարարագիրը: Շոտլանդացու խիստ հուզականության մասին են վկայում փաստաթղթում կիրառությունն գտած այնպիսի հասկացություններ ինչպիսիք են *անկեղծ, ազատությունից լավ բան չկա, երբեք չսպրոտս որպես ստրուկ* միավորները: Կարևոր հանգամանք է այն, որ փաստաթուղթն իրենից ներկայացնում է պատգամների ձևակերպում ուղղված երիտասարդ սերնդին, որտեղ *որդիս*՝ եզակի թվով հասարակ գոյականը այդ սերունդը ներկայացնող հավաքական ուժն է: Փաստաթղթի լարվածությունը կրող միավորը հաջորդում է *որդիս* գոյականին: Շոտլանդացու հոգում չկա չարություն, չկա վրեժի ձգտում. նա սուկ ցանկանում է լինել ազատ ու անկախ: Եվ հետևելով իր հոգու ձայնին՝ նա նա պատգամում է որդուն *«երբեք, երբեք, երբեք չմնալ անգլիացու լծի տակ, ոչնիսկ էթե աշխարհում հարյուր շոտլանդացի կենդանի մնա»*: Սա անմիջական արձագանքն է անգլիական Էդուարդ առաջին թագավորի իրագործած ասպատակությունների, բռնացումների, սպանությունների, մասսայական ջարդերի, երբ հրի ու սրի մատնվեցին շոտլանդացի խաղաղ բնակիչները, ում

մեջ բացակայում է սերը բռնության նկատմամբ, ատելությունն իր նմանի նկատմամբ: Հայտարարագիրն հաստատում է, որ սպանված հոգևորականներին, միանձնուհիներին, երեխաներին ու կանանց միավորում էր ոչ թե տարիքը, սեռը, կրոնը, կարգավիճակը, այլ անկախության ձգտումը, օտարի լծին չենթարկվելու մղումը: Թշնամին անողոր էր ու դաժան, նա մոտենում էր իր գոհերին բարեկամի կերպարանքի տակ ծայրված, իսկ հետո անցնում էր իր անմարդկային գործին:

Կյանքի նման փորձը բերել է շոտլանդացուն այն համոզման, որ *«խաղաղությունը գալիս է ամենաթեժ պատերազմից հետո»* «Hotter war sooner peace.», *«անարդր խաղաղ կայրի, էթե գենք ունենա»* «Weapons bode peace.», *քանի որ «խաղաղության տևողությունը կախված է հարևանի կամքից»* «Nae man can live langer in peace than his neighbours like.»: Շոտլանդացու կարծիքով *«պատերազմի ձգտում է նա, ով երբեք չի փորձել այն»* «War's sweet tae them that never tried it.»: Վերը քննարկվածը փաստում է, որ համամարդկային արժեքները կարող են համընկնել ազգայինի հետ, սակայն հայտնի է, որ աշխարհի ոչ բոլոր ազգերն են ձգտում գենքն օգտագործել խաղաղություն հաստատելու համար:

Շոտլանդացու հոգեկերտվածքը բնութագրող հասկացությունները պահպանելով իրենց կարևորության աստիճանը, համահարթեցման արդի դարաշրջանում որոշ դեպքերում ենթարկվել են ձևափոխության՝ ձեռք բերելով նոր հնչերանգներ: Նշենք, որ շոտլանդացին, այնուամենայնիվ չի դավաճանել իր ազգային կերպարին, արժեհամակարգին ու հոգեկերտվածքին, չնայած, ինչպես արդեն նշել ենք, մայրենիի հետ կապված կարգավիճակի փոփոխությունները իրենց ազդեցությունն են ունեցել ինքնության վրա: Փոփոխությունները անգն աչքով կարելի էր տեսնել 2014 թ. մշակված սահմանադրության նախագծում, որը պետք է ծառայեր ազատ ու անկախ Շոտլանդիային: Նախագծի 11-րդ գլխում բերվում էին հասարակական կյանքի 7 սկզբունքները՝ մշակված Պառլամենտի բոլոր անդամների, նախարարների, քաղաքացիական ծառայողների, դատավորների, տարածքային, քաղաքային, վարչական կենտրոնների խորհուրդների և այլ հասարակական պաշտոններ վարող անձանց համար, ովքեր, ակնկալվում է, որ պարտավոր են գործել ըստ բարոյական նորմերի՝ ելնելով ներքոհիշյալ սկզբունքներից: Շոտլանդացին լրջությամբ է մոտենում բարոյական նորմերի իրագործման ու պահպանման հարցին: Սակայն ուսումնասիրելով շոտլանդական սահմանադրության նախագիծը բացահայտում ենք, որ 1320 թ. անգլիական լծից խուսափող շոտլանդացին, այնուամենայնիվ, սահմանադրության նախագծի վերոհիշյալ հատվածը կազմել է անգլիականի նմանությամբ [6], և տեքստը ոչ թե սուկ պարունակում է իմաստային բեռնվածություն կրող *selflessness, integrity, objectivity, accountability, openness, honesty, leadership* հասկացությունները, այլ տեքստը կրկնվում է ամբողջությամբ. նշված միավորների ընտրությունը պատահական չէ և վկայում է, որ շոտլանդական ինքնության մաս կազմող լեզվամտածողությունը անգլիականի հետ ունի ընդհանրություններ: Ուսումնասիրությունը բացահայտում է, որ 1320 թ. անգլիական լծից խուսափող հուզառատ շոտլանդացին, այնուամենայնիվ, ապրելով անգլիացու հետ կողք-կողքի, ժամանակի ընթացքում որդեգրել է անգլիական ինքնությանը հատուկ որոշ առանձնահատկություններ՝

կարողանում է զսպել իր հուզառատությունը և խոսքում հանդես բերել անհրաժեշտ չափավորություն, որն հնարավոր է դառնում ազգային բարձր ինքնագիտակցության շնորհիվ: Այն հանգամանքը, որ շոտլանդացին պատրաստ է կիրառել անգլիական բարեկարգության կանոնները շոտլանդական համատեքստում՝ վկայում է անգլիական գործոնի ազդեցության մասին: Շոտլանդացին զուգահեռաբար կրում է նաև բրիտանական ինքնություն՝ լեզվամտածողության և ինքնության առումով առկա են որոշակի ընդհանրություններ: Ապրելով անգլիացու կողքին դարերով և առաջնորդվելով միևնույն իրականության մեջ ստեղծված օրենքներով՝ շոտլանդացին կատարել է տրամաբանական և պատճառաբանված ընտրություն՝ սահմանադրության նախագծում ներառելով նշված հասկացությունները պարունակող տեքստահատվածը:

Ուժեղ ինքնությունների համար, ինչպիսին շոտլանդականն է, ներկայումս լրացուցիչ եվրոպական ինքնություն կրելու պատրաստակամությունը զարգացումների նոր հնարավորություններ է ընձեռում. ազգապահպանության և լեզվապահպանության խնդիրներով տարված շոտլանդացուն հաջողվել է պաշտոնական մակարդակով հասնել նրան, որ ԱԺ-ում երդման արարողության կատարումը լինի շոտլանդերենով:

Եզրակացություն.

Հետազոտությունը հաստատում է, որ

- շոտլանդերենի և անգլերենի որոշակի միաձուլում, շոտլանդական և անգլիական լեզվամտածողությունների ընդհանրություններ իրոք գոյություն ունեն, որի մասին են վկայում շոտլանդերենի կարգավիճակն ու լեզվամտածողության նմանությունների հիմքով ստեղծված կարևոր

փաստաթղթերը.

- իբրև լիարժեք լեզուներ՝ մայրենի Scots և Scottish Gaelic տարատեսակների պահպանումն ապահովված է փաստաթղթերով, սակայն իրականում դրանք դիտարկվում են որպես հին լեզուներ. նկատվում է միտում՝ պահպանել այդ լեզուները բոլոր հարթակներում բազմապիսի շփումների, ինչպես նաև ուսուցման միջոցով.

- Ճանաչողական հասկացությունների միջոցով սերնդ-սերունդ են փոխանցվում ազգային արժեքներն ու իմաստությունները, որոնք անգնահատելի են ազգի լեզվամտածողության և ազգապահպանության հարցում.

- շոտլանդացին միաժամանակ երեք ազգային ինքնության կրողն է՝ շոտլանդական, բրիտանական, եվրոպական, որի մասին է վկայում մայրենի լեզվի կարգավիճակը.

- շոտլանդացին, ով դարեր շարունակ խուսափել է անգլիական ազդեցությունից, որի մասին վկայում է 1320թ. Արբրոուի անկախության հայտարարագիրը, դեմ է Բրեզգիթին, քանի որ այն կարող է ուղեկցվել տարածքային-սահմանային փոփոխություններով՝ ի վնաս Եվրամիության սահմաններում անկախության ձգտող Շոտլանդիայի.

- ազատասեր շոտլանդացու ինքնությանն ու հոգեկերտվածքին վերաբերող խնդիրներն ու զարգացումները պետք է դիտարկել համահարթեցման ու Բրեզգիթի պայմաններում.

- եվրոպական ինքնություն կրելու պատրաստակամությունը զարգացումների նոր հնարավորություններ է ընձեռում ուժեղ ինքնություններին՝ այդ թվում շոտլանդացուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. McHarg, A. Brexit and Scotland. SAGE Journals -// Volume: 19, issue: 3. Article first published online: June 6, 2017. 4 Issue published: August 1, 2017. Access link: <<https://journals.sagepub.com>> doi > (Accessed October 2019)4.
2. Nihtinen, Atina L. K. Scotland' s Linguistic Past and Present: Paradoxes and...//Studia Celtica Fennica II. 2005. 4 Access link: <https://www.researchgate.net/publication/238796788_Scotland'_s_Lingui...> (Accessed October 2019).
3. Sjöblom, T. Introduction: Representing Celticity. In Aspects of Celticity . Jyväskylä. SFSK. 2000.
4. Cunliffe, B. The Celts. A Very Short Introduction. Oxford. Oxf. Univ. Press. 2003.
5. Declaration of Arbroath - Wikisource, the free online library . Access link: <https://en.wikisource.org/wiki/Declaration_of_Arbroath> (Accessed October 2019).
6. The 7 principles of public life . GOV.UK. Access link: <<https://www.gov.uk/government/publications/the-7-principles-of-public-life>> (Accessed December, 2019).
7. McArthur, T. The Oxford Companion to the English language. Oxford. Oxf. Univ. Press. 1992.
8. Crystal, D. English As A Global Language. Cambridge: University Press. 1997.
9. Aitken, W. R. Introduction. Scottish Literature in English and Scots: A Guide to Information Sources. Ed by W.R. Aitken. Detroit. Gale Research Co. 1982.
10. Wood, Henry Harvey. Scottish literature. London. Longman, Green, for the British Council. 1952.
11. Zimina E., Sargsyan M. Politics, Poetry, People: an Overview of Contemporary Poetry Trends in the British Literary Landscape . //Armenian Folia Anglistika, 1(19). Yerevan. YSU Press. 2019
12. Ethnicity, Identity, Language and Religion//Scotland's Census . Access link: <<https://www.scotlandscensus.gov.uk/ethnicity-identity-language-and-religion>> (Accessed December 2019)
13. Weber, Victoria Scottish, English, British, European Identities: A Literature Review..., 1999.– Sociology [E. source]. Access link: <www.sociology.ed.ac.uk/youth/docs/v_webers_lit_> (Accessed December 2019).

Linguopolity and the strife for independence as characteristic features of Scottish identity

N. Gasparyan

Abstract. Meta-cognitive strategies allow "Scottishness" and "Celticness" to be presented through controversial attitudes towards the status of the mother tongue (Scots, Scottish Gaelic). National identity concepts have been singled out, discussed and analyzed. The research establishes: the Scottish people whose strife for independence is reflected in documents and literature, are carriers of three identities – Scottish, British, and European. Within the frames of globalization "Scottishness", firstly, is not a matter of mother tongue, but a matter of a desire to gain independence without territorial losses. Hence, the Scottish people do not not want Britain to Brexit. They simply wish to revive their mother tongue through formal and informal communication.

Keywords: *linguoculture, Scottish people, identity, independence, declaration.*